ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<20>> փետրվարի 2020թ. N ՄՊ/46-2020

ք. Արմավիր

ԱՐԹՈՒՐ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 8-րդ, 10-րդ, 21-րդ կետերով, հիմք ընդունելով Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի 2020 թվականի փետրվարի 18-ի գրությունը, <<Հայ-թուրքական սահմանի երկայնքով տեղակայված գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման կարգը, բարդությունները և դրանց վերացման ճանապարհները>> թեմայով աշխատանքային քննարկմանը մասնակցելու նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանին 2020 թվականի փետրվարի 20-ին գործուղել քաղաք Երևան՝ Ազգային ժողով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/20/2020 13:55:06 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230